



ՍՈՒՐՊ ԶԱԿՈԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԾԿԵՂԵՑԻ

Վարդապառի Երկրորդ Կրտսեր
18 ՅՈՒՆԻՍ 2021

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1
Ծանուցումներ էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԻՆ (3.16-4.1)

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Քանի
որ Սիոնի աղջիկները հպար-
տացան, բարձրավիզ կը քալեն,
ցանկալից ակնարկներ կը նետեն,
մանրաքայլ կը շարժին եւ ոստոստուն
կը քալեն, որպէս պատիճ՝ պիտի
նուաստացնեմ Սիոնի իշխանուհիները
եւ զիրենք պիտի մերկացնեմ իրենց
զարդերէն»։

Այն օրը Տէրը պիտի հանէ անոնց
փառաւոր զգեստները եւ ոտքերուն
մեհեւանդները, մազի հիւսքերը, գլխա-
զարդ ծամակներն ու պսակակալները
եւ վզի մահիկները, ճակատի գինդերը,
օղերը, ապարանջաններն ու շղարչէ
շլերը, ապարօնները, քօղէքներն ու
մետաքսէ գոտիները, անուշահոտերու
տուփերը, յուռութքները, մատանի-
ներն ու քթամանեակները, դիպակէ
պատմուճանները, վերարկունե-
րը, հայելիները, բեհեզէ զգեստ-
ները, խոյրերն ու քօղերը։
իրենց հպարտանքին փոխարէն՝

անուշահոտութեան տեղ գարշահո-
տութիւն պիտի ունենան, մէջքի
կամարներուն տեղ՝ չուանէ գօտի,
գեղեցկահիւս մազերուն տեղ՝ կնտու-
թիւն, ոսկեհիւս դիպակներուն տեղ՝
քուրձ պիտի հագնին եւ գեղեց-
կութեան տեղ ամօթ պիտի ունենան։
Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները
սուրով պիտի իյնան, անոնց կտրիճները
պատերազմի մէջ պիտի սպաննուին։

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻՆ
(1.25-30)

Աստուծոյ անօրինութիւնը,
որ յոյներ յիմարութիւն
կ'որակեն, իմաստնագոյն է քան
մարդկային որեւէ իմաստութիւն։
Եւ Աստուծոյ խաչը, որ հրեաներ
տկարութիւն կը համարեն, աւելի զօրեղ
է քան մարդկային ամէն զօրութիւն։

Եղբայրներ, դուք ձեզմէ դատեցէք.
Ի՞նչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց։
Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հզօր կամ
ազնուատոհմ էր մարդկային չափա-
նիշներով։ Բայց Աստուած դիտմամբ
ընտրեց այն ինչ որ այս աշխարհը
յիմար եւ անիմաստ կը գտնէ, անով
իմաստունները ամօթով ձգելու համար.
ընտրեց այն ինչ որ այս աշխարհը տկար

կը համարէ, անով հզօրները ամչցնելու համար. Եւ ընտրեց այն ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը համարէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ի՞նքն է որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՄԱՏԹԷՈՍԻ

(18.10-14)

**Մ եր Տէրը Յիսուս Քրիստոս
կ'ըսէ.-**

«Զգո՞յշ, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն ոեւէ մէկը. գիտցէք որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար»:

«Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ մը հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը ոչխարները լերան վրայ եւ չ'երթա՞ր փնտոելու կորսուած ոչխարը: Այո՛, կ'երթայ: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ իննսունինը ոչխարներուն համար որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուգեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի»:

**Այժելեթէ՛ք
ԵԿԵՂԵԺԻՆ
ԴԻՄԱՏԵՏՈՒ ԷԶԾ
ԵՒ**

ԶԵԻ ՀՎԱՆՈՒԹԻՒՆ
յԱՅՏԱԵԺԷ (like).

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

**Այժելեթէ՛ք ԱՎԵՒ
Ս. ՅԱԿՈՒ
ԱՊԱՋԱՐԴԱԿԱՒՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵԺԻՆ
ԿՎՅՔԵԶԾ**

www.sourphagop.net

ԹԵՐԹԻԿԻ ԱԽՈՐԻ ԹԻՒՐԻ
ԿՐԱՎՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.net
ԿՎՅՔԵԶԾԻ ՎՐԱՅ

**Հոգէւազաւեան
ԶԵՐ ԱՐՁԱՎԳՐՈՒԹԻՒՆԱԵՐԻ
ԱԽՈՐՈՐ ԿԱՏԱՐԵԺԷՔ ԿԱՄՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵԺԻՆ ԴԻՎԱՆԱՏՈՒՆ:**